Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն № 4

ԵՊՀ Ֆարմացիայի ինստիտուտի 2024-2025 ուս. տարվա
գիտական խորհրդի առցանց հարցման նիստի

ք.Երևան 24 հունվարի 2025թ.

Ներկա էին՝ գիտխորհրդի 20 անդամներից 16–ը:

Նախագահ՝ ք.գ.թ., դոցենտ Ա. Մկրտչյան

Գիտական քարտուղար՝ ք.գ.թ., դոցենտ Ա. Դաղայան

ՕՐԱԿԱՐԳՈՒՄ՝

1. **Ֆարմացիայի ինստիտուտի առկա և հեռակա ուսուցման 2024/2025 ուսումնական տարվա ավարտական աշխատանքների թեմաների հաստատման հարցը:**
2. **Ֆարմացիայի ինստիտուտի ուսանողներին անվանական կրթաթոշակներ նշանակելու հարցը:**
3. **Ֆարմացիայի ինստիտուտի Ֆարմքիմիայի և ֆարմակոգնոզիայի ամբիոնի վարիչ ք.գ.թ. դոցենտ Հայարփի Մանթաշի Սիմոնյանի ղեկավարած 23SC-CNR-1D002 ծածկագրով «Սինթետիկ ալֆա-ամինոթթուները և պեպտիդների վրա հիմնված համակարգերը հակաքաղցկեղային ռազմավարության մշակման համար» վերնագրով թեմայի ամփոփիչ հաշվետվության քննարկման և հաստատման հարցը:**
4. **Ընթացիկ հարցեր:**

ՔՆՆԱՐԿԵՑԻՆ ԵՎ ՈՐՈՇԵՑԻՆ՝

1. **Ֆարմացիայի ինստիտուտի առկա և հեռակա ուսուցման 2024/2025 ուսումնական տարվա ավարտական աշխատանքների թեմաների հաստատման հարցը:**

Լսեցին՝ Ֆարմացիայի ինստիտուտի ավարտական աշխատանքները վերահսկող հանձնաժողովի նախագահ, ինստիտուտի ամբիոններում կայացած նիստերում քննարկվել և գիտխորհրդի հաստատմանն են ներկայացվել «Ֆարմացիա» և «Դեղագործական քիմիա» կրթական ծրագրերի ուսանողների ավարտական աշխատանքների թեմաների և ղեկավարների անվանացանկը:

Ելույթ ունեցան՝ Ֆարմքիմիայի և ֆարմակոգնոզիայի ամբիոնի վարիչ բ.գ.թ., դոցենտ Հայարփի Սիմոնյանը, Ֆարմտեխնոլոգիայի և ՖԷԿ-ի ամբիոնի վարիչ Անահիտ Հովհաննիսյանը, ովքեր առաջարկեցին հաստատել ավարտական աշխատանքների թեմաները և ղեկավարներին:

Որոշեցին՝ (միաձայն) հաստատել Ֆարմացիայի ինստիտուտի առկա և հեռակա ուսուցման 2024/2025 ուսումնական տարվա ավարտական աշխատանքների թեմաները և ղեկավարներին:

2. Ֆարմացիայի ինստիտուտի ուսանողներին անվանական կրթաթոշակներ նշանակելու հարցը:

Լսեցին՝ Ֆարմացիայի ինստիտուտի գիտական քարտուղար բ.գ.թ. Ա. Դադայանին, ով գիտխորհրդի անդամներին հաղորդեց, որ ներկայումս Լևոն Ռոտինյանի և Նազելի Չարչյանի անվան անվանական կրթաթոշակ են ստանում «Ֆարմացիա» մասնագիտության մագիստրատուրայի և բակալավրիատի ուսանողներ՝ Հեղինե Ստեփանի Օհանջանյանը և Մարիամ Մարտունի Մարգարյանը: Ա. Դադայանը նշեց, որ Հեղինե Օհանջանյանը (ՄՈԳ>18) և Մարիամ Մարգարյանը (ՄՈԳ>18) 4 կիսամյակ անընդմեջ գերազանցությամբ շարունակում են իրենց ուսումը: Ֆարմացիայի ինստիտուտի գիտական խորհրդի անդամներն առաջարկեցին շարունակել Հեղինե Ստեփանի Օհանջանյանի և Մարիամ Մարտունի Մարգարյանի անվանական կրթաթոշակների տրամադրումը:

Որոշեցին՝ Ֆարմացիայի ինստիտուտի գիտական խորհուրդը միաձայն որոշեց.

1. Շարունակել «Ֆարմացիա» մասնագիտության մագիստրատուրայի ուսանողուհի Հեղինե Ստեփանի Օհանջանյանի՝ Լևոն Ռոտինյանի անվան կրթաթոշակը:
2. Շարունակել «Ֆարմացիա» մասնագիտության 4-րդ կուրսի ուսանողուհի Մարիամ Մարտունի Մարգարյանի՝ Նազելի Չարչյանի անվան կրթաթոշակը:

3. Ֆարմացիայի ինստիտուտի Ֆարմքիմիայի և ֆարմակոգնոզիայի ամբիոնի վարիչ բ.գ.թ. դոցենտ Հայարփի Մանթաշի Սիմոնյանի ղեկավարած 23SC-CNR-1D002 ծածկագրով «Սինթետիկ ալֆա-ամինոթթուները և պեպտիդների վրա հիմնված համակարգերը հակաքաղցկեղային ռազմավարության մշակման համար»

վերնագրով թեմայի ամփոփիչ հաշվետվության քննարկման և հաստատման հարցը:

Լսեցին՝ ԵՊՀ Ֆարմացիայի ինստիտուտի Ֆարմքիմիայի և ֆարմակոգնոզիայի ամբիոնի վարիչ ք.գ.թ. դոցենտ Հայարփի Մանթաշի Սիմոնյանի ղեկավարած 23SC-CNR-1D002 ծածկագրով «Սինթետիկ ալֆա-ամինոթթուները և պեպտիդների վրա հիմնված համակարգերը հակաքաղցկեղային ռազմավարության մշակման համար» վերնագրով թեմայի ամփոփիչ հաշվետվությունը: Հաշվետվությունը ներառում է ՀՀ ԿԳՄՄՆ գիտության կոմիտեի և Իտալիայի Հանրապետության ազգային հետազոտությունների խորհրդի կողմից ֆինանսավորված գիտական հետազոտությունների հայ-իտալական համատեղ թեմայի շրջանակներում ստացված արդյունքները: Հ. Սիմոնյանը տեղեկացրեց, որ հաշվետու ժամանակաշրջանում հետազոտվել են նիկելի դեհիդրոամինոթթվային կոմպլեքսներին հետերոցիկլիկ օղակներ պարունակող նուկլեոֆիլների միացման ռեակցիաները, ինչի արդյունքնում սինթեզվել են էնանտիոմերապես հարստացված նոր ոչ սպիտակուցային α-ամինոթթուներ, ինչպես նաև այդ ամինոթթուների հիմքի վրա դիպեպտիդներ: Իրականացվել է նաև սինթեզված միացությունների կենսաբանական հատկությունների ուսումնասիրություն: Նախագծի շրջանակում տպագրվել է մեկ գիտական հոդված Q1 կատեգորիայի ամսագրում: Հաշվետու ժամանակահատվածի երրորդ եռամսյակում թեմայի գիտական ղեկավարը և կատարողներ Լուսինե Սահակյանն ու Արմեն Գալստյանը Իտալիայի գիտական խմբի ղեկավար Ջիովանի Ռովիելոյի հրավերով գործուղվել են Իտալիայի Նեապոլ քաղաքի «Կենսակառուցվածքների և կենսաիմիջինգի» ինստիտուտ: Սեմինար քննարկումների ընթացքում ամփոփվել են կատարված աշխատանքները և իրականացվել են նախագծի շրջանակներում սինթեզված ամինոթթուների նմուշների ՈՒՄ և ՇԴ սպեկտրոսկոպիական հետազոտություններ:

Հաշվետու ժամանակահատվածի չորրորդ եռամսյակում ԵՊՀ է այցելել Իտալիայի գիտական խմբի ղեկավար Ջիովանի Ռովիելոն, ով հանդիպումներ է ունեցել գիտական խմբի անդամների հետ, քննարկվել են հաջորդ նախագծի

հնարավոր ֆինանսավորման դեպքում նախատեսվելիք հետազոտական աշխատանքները:

Հ. Սիմոնյանը հավելեց նաև, որ Ջիովանի Ռովիելոն սեմինարներ և գործնական աշխատանքներ է իրականացրել խմբի երիտասարդ անդամների հետ՝ ՀՀ բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի ֆինանսավորմամբ վերջերս ձեռք բերված ՇԴ սպեկտրոսկոպիայի աշխատանքային առանձնահատկություններին ծանոթացնելու նպատակով:

Որոշեցին ՝ (միաձայն) հաստատել Հ. Սիմոնյանի ղեկավարությամբ իրականացված 23SC-CNR-1D002 ծածկագրով «Սինթետիկ ալֆա-ամինոթթուները և պեպտիդների վրա հիմնված համակարգերը հակաքաղցկեղային ռազմավարության մշակման համար» վերնագրով թեմայի ամփոփիչ հաշվետվությունը:

4. Ընթացիկ հարցեր:

Նիստում ընթացիկ հարցեր չեն քննարկվել:

Գիտական խորհրդի նախագահ՝
բ.գ.թ, դոցենտ **Ա. Մկրտչյան**

Գիտական խորհրդի քարտուղար՝
բ.գ.թ., դոցենտ **Ա. Դաղայան**